## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 26 ՆՈՅԵՄԲԵՐ 2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/32-1» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Ծաղկաձոր «22» Հունվար 2026 թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ն.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Շիշանյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), ցուցաբերելով երկկողմանի կամահայտնություն, հիմք ընդունելով 26.11.2025թ. կնքված N **«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/32-1»** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, **«ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ** -ի կողմից 14.01.2026 թ. ներկայացված գրությունը, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը համաձայնում են **26 նոյեմբեր 2025թ. կնքված N «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/32-1»** գնման պայմանագրում **2026 թվականի** հունվարի 22-ին կատարել հետևյալ փոփոխությունները.

1.2 Պայմանագրի հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ. (Հավելված N 1-ը կցվում է)՝ ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգելով երեսուն օրացուցային օրով՝ ծառայությունների մատուցման վերջնաժամկետը սահմանելով՝ **2026 թվականի փետրվարի 25**-ը:

1.3 Սույն համաձայնագրում չնշված Գնման պայմանագրով նախատեսված դրույթները թողնվում են անփոփոխ:

1.4 Սույն համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 օրինակից , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Ծաղկաձորի համայնքապետարան** | **<<ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ** |
| **ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9** | **Գեղարքունիքի մարզ,գ. Կարմիրգյուղ, Ձ.Շիոյան 63** |
| **Կենտրոնական գանձապետարան** | **«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ** |
| **ՀՎՀՀ 03027029** | **ՀՎՀՀ 08422527** |
| **ՀՀ 900122002240** | **ՀՀ 220083335384000** |
| **Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան** | **Տնօրեն Ա.Շիշանյան** |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 26 » նոյեմբեր 2025թ. կնքված*
**ԾՔ-ԳՀԽԾՁԲ-25/32-1** *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 7124120 0 | ***Հիմնական պարտականություններ՝***<br>• Շահառու համայնքից (կամ համայնքներից) նախագծման թույլտվություն (ներ) կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ների) ստացում (օնլայն տարբերակով):<br>• Ինժեներական հետազննման իրականացում /գեոլոգիա/:<br>• Գեոդեզիական հանույթի իրականացում /ըստ անհրաժեշտության/,<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:<br>• Ճանապարհի ծրագծի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգետնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագիծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում:<br>• Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում | դրամ | 6 150 000 | 1 | ՀՀ Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք | Պայմանագրի կնքման պահից մինչև 25.02.2026թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:<br>*Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*<br>• **Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,**<br>• **հետազննման ընթացքում հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով առնվազն յուրաքանչյուր 330 մետր տեղամասում, (իսկ նստվածքային տեղամասերում պարտադիր՝ առնվազն 2մ խորությամբ) կատարել հորատումներ՝ ճանապարհային պատվածքի շերտի հաստության, պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման անհրաժեշտ խորությամբ և վիճակի գնահատում:**<br>• **հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:**<br>*Նախագծերի նկատմամբ պահանջներ*<br>• Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:<br>• Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝<br>✓ Հողային պաստառի վերականգնում /վերակառուցում/ կառուցում (ըստ անհրաժեշտության)<br>✓ Հենապատերի վերականգնում/ վերակառուցում/ նորոգում/ կառուցում(ըստ անհրաժեշտության)<br>✓ Ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում(ըստ անհրաժեշտության)<br>✓ մայթերի վերականգնում/ վերակառուցում/ նորոգում/ կառուցում(ըստ անհրաժեշտության) | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ✓ ջրահեռացման համակարգի վերականգնում/ վերակառուցում/ նորոգում/ կառուցում(ըստ անհրաժեշտության)<br>✓ արհեստական կառուցվածքների վերականգնում/ վերակառուցում/ նորոգում/ կառուցում(ըստ անհրաժեշտության)<br>✓ ճանապարհի կահավորում<br>✓ անվտանգության տարրերի,ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:<br>**Նախագծային փաստաթղթերը մշակելիս անհրաժեշտ է զերծ մնալ ՀՀ տարածքում չգործող կամ ուժը կորցրած նորմատիվ փաստաթղթերի կիրառումից:**<br><br>**- Նախագծերում հաշվի առնել կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների պահանջները:**<br><br>**- Նախագծային լուծումները պետք է լինեն հիմնավորված, նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող ստանդարտներին,նորմերին, հրահանգներին և ГОСТ-երի պահանջներին, նախագծով տրված ճանապարհային պատվածքը պետք է հիմնավորված լինի նախագծողի կողմից՝ հետազննման ընթացքում ձեռք բերված ելակետային տվյալների վերլուծության հիման վրա և համապատասխանի գործող նորմերին:**<br><br>Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝<br><br>ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,<br><br>բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:<br><br>- Նախագծով նախատեսված նյութերի և սարքավորումների երաշխիքային ժամկետների ցանկ:<br>- օգտագործվող նյութերը, պատրաստվածքները, սարքերը, սարքավորումները սահմանելիս նախապատվությունը տալ տեղական արտադրության և ՀՀ ներմուծվող շինանյութերին, սարքերին, սարքավորումներին,<br>- շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիաների (ներառյալ լիցենզիայի դասը) / ներդիրների ցանկը:<br><br>Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝<br><br>ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:<br><br>Վճարումը կկատարվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո: Փորձաքննությունն իրականացվելու է Պատվիրատուի կողմից: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 03027029
ՀՀ 900122002240
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<ԱՐՇԻՆ-ԿՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ.Կարմիրգյուղ,
Զ.Շիոյան 63
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 08422527
ՀՀ 220083335384000
Տնօրեն Ա.Շիշայան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.